ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«02» 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 00099

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Սասուն Գասպարյան***
ք. Երևան, Բաբաջանյան 1 շենք, բն. 17

Գործունեությունը՝ ***ՆորՆորք վարչական շրջանի Դավիթ Բեկ 103/4, 103/6 և 103/8 հասցեներում բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ 00099
թիվ ԲՓ
<02> 11 2020թ.

Երևան քաղաքի ՆորՆորք վարչական շրջանի Դավիթ Բեկ փողոցի 103/4, 103/6 և 103/8 հասցեներում բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Քաղաքացի՝ Սասուն Գասպարյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Նոր նորք վարչական շրջան

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7-րդ կետի ա) ենթակետի՝ բնակելի համալիրի կառուցումը որպես քաղաքաշինության բնագավառի գործունեություն դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Ներածական մաս. Քաղաքացի Սասուն Գասպարյանի կողմից նախատեսվող կառուցապատումն իրականացվելու է Նոր Նորք վարչական շրջանի հարավային մասում՝ Դավիթ-Բեկ փողոցի 103/4, 103/6 և 103/8 հասցեներում: Կառուցապատվող հողամասն ունի հյուսիս-արևմտյան թեքություն, զբաղեցնում է 1.25 հա մակերես: Բնակելի համալիրի նախագծման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականները /N 29102015-01-0137, N 26062012-01-0875, N 2475502/, Երևանի քաղաքապետի կողմից 09.12.2019թ. տրված հ.01/18-07/1-Բ-3887-1261 ճարտարապետահատակագծային առաջանդրանքը /նախագծման թույլվությունը/: Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման:

Նկարագրական մաս. Մորֆոլոգիական տեսանկյունից տարածքը գտնվում է Նոր Նորք համայնքի հարավային լանջին՝ 1130-1350մ բացարձակ բարձրությունների վրա: Կառուցապատվող տեղանքում հողագոյացումը պայմանավորված է հրաբխային ապարների, մասնավորապես՝ բազալտի և տուֆի հողմահարմամբ, որտեղ հողածածկույթը հանդիպում է տեղ-տեղ: Դիտարկվող տարածքում գրունտային ջրերը ընկած են 30մ և ավել խորության վրա: Տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից բարենպաստ է կապիտալ շինարարության համար:

Կառուցապատվող տեղանքի հարևանությամբ գտնվում են մենատներ (Առանձնատներ): Տարածքից 950մ հեռավորության վրա գտնվում է հանրային հեռուստաընկերությունը /Երևանի ռադիոհեռուստահաղորդիչ կենտրոնը/, ինչով պայմանավորված կառուցապատվող տարածքի լանդշաֆտային նախագծում տեղ է գտել հնարավորինս մեծ մակերեսով կանաչապատ գոտու ստեղծումը:

Կառուցապատման հիմնական գաղափարն է՝ ճարտարապետական ծավալները հողամասի վրա տեղավորել ըստ տեղանքի, հողատարածքը վերածել շենք-այգիների: Ճարտարապետական ընդհանուր լուծումները հիմնվում է հետևյալ մոտեցումների վրա՝

- ապահովել նախագծի ճարտարապետական և գործածական ծավալումն ըստ տեղանքի,
- տեղծել հյուսիս-հարավ և արևելք-արևմուտք հետիոտնային անցումներ, շենք-այգի գաղափար և ապահովել անմիջական կապ բնակիչների և շրջակա տարածքների միջև:

Թաղամասը բաղկացած կլինի 12 բազմաբնակարան շենքերից, որից՝

- 4 շենք՝ 11 բնակելի հարկերով, 1-ական հասարակական և 1-ական կիսանկուղային հարկերով,
- 4 շենք՝ 12 բնակելի հարկերով, 1-ական հասարակական հարկով,
- 2 շենք՝ 13 բնակելի հարկերով, 1-ական հասարակական, երկհարկանի ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղիով,
- 2 շենք՝ 14 բնակելի հարկերով, 1-ական հասարականան, երկհարկանի ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղիով:

Շենքերում յուրաքանչյուր բնակելի հարկը բաղկացած կլինի 5 կամ 6 բնակարաններից, բնակարանների միացումները նախատեսված են ըստ պահանջարկի: Շենքի առաջին հարկի բարձրությունը 3,6 մ է, մյուս վերգետնյա հարկերինը՝ 3.3 մ: Տանիքը նախատեսված է հարթ: Բնակելի թաղամասի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է <<Վեոլիա Ջուր>> ՓԲ ընկերության տեխնիկական պայմանի համաձայն: Ջրամիացման ցանցը կմիանա Դավիթ Բեկ փողոցից դեպի Նոր անկյուն թաղամաս տանող, ճանապարհին զուգահեռ անցնող՝ D=600մմ ջրատարից, իսկ կոյուղագիծը կմիացվի Դավիթ Բեկ փողոցի՝ D=1000մմ կոյուղատարին: Բնակելի թաղամասի գազամատակարարումն իրականացվելու է <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ տեխնիկական պայմանին համաձայն՝ միանալով գազամատակարարման ցանցին: Բնակելի համալիրի շահագործման ընթացքում ջերմամատակարարումը կիրականացվի անհատական ջեռուցման կաթսաներով:

Կառուցապատվող հողամասի տեխնիկատնտեսական ցուցանիշները ներառում են՝

- հողամասի ընդհանուր մակերես – 12598 քմ,
- կառուցապատման մակերես - հողամասի 37%-ը, կամ 4661 քմ,
- Կանաչապատման մակերես - հողամասի 40%-ը, կամ 3175 քմ:
- Ասֆալտապատ և սալիկապատ տարածքներ ՝ 4762 քմ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո հողամասի չկառուցապատված հատվածները և հարակից տարածքները նախատեսվում են բարեկարգել և կանաչապատել: Տարածքի բարեկարգման համար նախատեսվում է խաղահրապարակներ և տարբեր տեսակի ժամանցային գոտիներ: Բարեկարգման մակերեսը ներառում է նաև ճանապարհներ, մայթեր, հենապատեր, հարթակներ: Ավտոկայանատեղի ընդհանուր մակերեսը կկազմի 9000 ք/մ: Բնակելի շենքերը նախագծված են ապակեպատ և կանաչապատ ճակատային մակերեսներով:

Բնակելի համալիրի կառուցման ընդհանուր շինարարության տևողությունը կազմում է 36,0 ամիս: Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը նախատեսված է իրականացնել շինհրապարակից դուրս՝ լցակայաններում, կամ սպասարկման կետերում:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի ջրատար մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն շինհրապարակում տեղադրվող բիոզուգարաններով, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԶԲԱՂՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ЭКСПЕРТНАЯ
COMMISSION
OF EXPERTS

Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման հողային աշխատանքների ժամանակ Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է 52000 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 38000 խմ ծավալը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր, իսկ մնացած՝ 14000խմ ծավալը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում՝ որպես հետլիցք օգտագործելու համար: Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու նպատակով հայտում ներկայացվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսված է՝

- շինարարության ընթացքում պարբերաբար ջրցանի իրականացում /օրական 2-3 անգամ/,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում՝ իրականացնելով կարգավորում,
- շինարարական նյութերի (ավազ, խիճ, հողային զանգված և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- շինհրապարակում սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով,
- շինարարական աշխատանքերի ժամանակ կառուցապատվող շինության ծածկում՝ փոշու տարածումը կանխող ցանցով:

Հողային ռեսուրսների և շրջակա տարածքների պահպանության նպատակով, շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները նախատեսված են տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, իսկ նավթանյութերի արտահոսքի հավանականությունը հնարավոր կլինի կանխել շինարարական աշխատանքներում ապահովելով սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

Շինարարության ընթացքում հոսքաջրերի և անձրևաջրերի հեռացման համար, շինհրապարակին կից նախատեսված է պարզարան, որտեղ հոսքաջրերը կենթարկվեն մեխանիկական նստեցման, որից հետո պարզեցված ջուրը կրկին կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ առաջացած նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարության ընթացում հարակից տարածքների համար աղմուկի հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված է շինարարական աշխատանքների և տրանսպորտային երթևեկության կազմակերպում սահմանված ժամերին, աղմուկ առաջացնող մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգում և կարգաբերման իրականացում:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատումն իրականացվելու է բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն, որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատման համար օգտագործվելու են հետևյալ ծառատեսակները՝ 11 հատ եղևնի, 3 հատ ուռենի, 4 հատ թույա, 8 հատ գդաձև թույա: օգտագործվելու են նաև եղրևանու, վարդի թփատեսակներ, ծաղկասածիլներ և

ստեղծվելու է 520 քմ մակերեսով սիզախոտ: Կանաչ տարածքների ոռոգումն իրականացվելու է կաթիլային եղանակով: Տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /ըստ տեղամասերի և ժամանակացույցի, ներառյալ՝ տնկված ծառերի մոնիթորինգը/: Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվել են ծախսեր, որոնք շինարարության ժամանակահատվածի համար կկազմեն 1050000 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացավ հավանության:

Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների, պաշտպանության նախարարություններից, Երևանի քաղաքապետարանից և Նոր Նորք վարչական շրջանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել Առողջապահության նախարարի 2007 թվականի ապրիլի 4-ի թիվ 236-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով :
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է ՝
- պարսպապատել շինարարական հրապարակը,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

Տարածքի կանաչապատման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել տարածքի համար մշակված, Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված՝ բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում՝ ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
4.Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Երևան քաղաքի ՆորՆորք վարչական շրջանի Դավիթ Բեկ փողոցի 103/4, 103/6 և 103/8 հասցեներում բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխավոր մասնագետ՝ Հ. Մկրտչյան